

**ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե  
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 24/1**

**05 մայիսի 2014 թ.**

Քննարկվեց «Ստեփանավանի ճանապարհների շահագործում և շինարարություն» ՍՊԸ 17.03.2014 թ-ի թիվ 03/03 գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ 11.03.2014 թ-ի թիվ 1009509 ստուգման ակտի դեմ:

**«Ստեփանավանի ճանապարհների շահագործում և շինարարություն» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 11 նոյեմբերի 2013 թվականի թիվ 1009509 հանձնարարագրի 25 նոյեմբերի 2013 թվականից «Ստեփանավանի ճանապարհների շահագործում և շինարարություն» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների ճշտության ստուգում: Ստուգման արդյունքում կազմվել է թիվ 1009509 ակտը: Նշված ակտում արձանագրվել են խախտումներ: Ի թիվս այլ խախտումների՝ ստուգումն իրականացնող տեսուչները արձանագրել են, որ 2010 թ-ից մինչև 2012 թ-ը «Ստեփանավանի ճանապարհների շահագործում և շինարարություն» ՍՊԸ հաշվապահությունում չեն պահպանվել ձեռք բերված դիզելային վառելիքի փաստաթղթերը:

Այն հանգամանքը, որ ձեռք բերված դիզելային վառելիքի փաստաթղթերն իրականում չեն պահպանվել ընկերությունում անվիճելի փաստ է և ընկերությունը դրա դեմ որևէ առարկություն չունի: Սակայն նշված հանգամանքը ստուգումն իրականացնող հարկային տեսուչները գնահատել են որպես հարկային պարտավորությունների կատարման խախտում, որին ընկերությունը առարկում է՝ ստորև բերված պատճառաբանություններով.

Այն հանգամանքը, որ ձեռք բերված դիզելային վառելիքի փաստաթղթերը չեն պահպանվել հաշվապահական հաշվառման վարման կարգի խախտում է, սակայն անհրաժեշտ է նշել, որ 2010-2012 թ-ները «Ստեփանավանի ճանապարհների շահագործում և շինարարություն» ՍՊԸ վարչական շենքում կատարվում էր վերանորոգման աշխատանքներ, որի ընթացքում հաշվապահական փաստաթղթերը պարբերաբար տեղից տեղ են տեղափոխվել: Բացի այդ, 2010-2012 թ-ի ընթացքում ընկերության տնօրենը՝ կապված առողջական խնդիրների հետ, գտնվել է արտերկրում, տարել է բազմաթիվ ծանր վիրահատություններ: Նշված հանգամանքն իհարկե չի արդարացնում ձեռք բերված դիզելային վառելիքի փաստաթղթերի բացակայությունը կամ տեղի ունեցած անփութության փաստը, բայց նաև հիմքեր չի տալիս արձանագրելու, որ տեղի է ունեցել հարկային պարտավորությունների կատարման խախտում:

2010 թ-ից մինչև 2012 թ-ը ներառյալ՝ ընկերության շրջանառությունը կազմել է մոտ 539.648.152 դրամ, որից հարկային պարտավորություններ ընկերությունը կատարել է 115.340.305 դրամի չափով, այսինքն՝ 21,4 տոկոսի չափով, որից հետևում է, որ ընկերությունը կատարել է իր հարկային պարտավորությունները: Կատարված աշխատանքները փաստացի առկա են, դրանք կարելի է ստուգել: Բացի այդ, կան նաև

այդ աշխատանքների կատարման վերաբերյալ համապատասխան ակտեր, որոնք վկայում են աշխատանքների կատարված լինելու փաստի մասին: Այստեղից պետք է միայն մեկ հարց առաջանա, թե արդյոք ընկերության կողմից կատարված հարկային պարտավորությունները համապատասխանում են կատարված աշխատանքների ծավալին, թե ոչ: Եթե այո, ապա խնդիրը դրանով փակվում է, իսկ եթե ոչ, ապա ծագում է մյուս հարցը, թե որքան է կազմում խախտման չափը:

Ըստ գանգատի, պարզելու համար, թե հարկային պարտավորություններն ընկերության կողմից կատարվել են բավարար ծավալով կամ դրանք կատարվել են թերի, կարելի է ճշտել «Ստեփանավանի ճանապարհների շահագործում և շինարարություն» ՍՊԸ կատարած աշխատանքների ծավալը՝ համեմատելով այլ տարածքների ՃՇՇ-ների նույն ժամանակահատվածում կատարած նույն ծավալի աշխատանքների և կատարված հարկային պարտավորությունների չափի հետ, որից էլ պարզ կդառնա, թե ընկերության կողմից հարկային պարտավորությունների խախտում կամ թերացում առկա է, թե ոչ: Այս հանգամանքները հիմք են տալիս ընկերությանը կասկածի տակ առնելու կազմված թիվ 1009509 ակտի հիմնավորված լինելու հանգամանքը:

Ելնելով վերը նշված հանգամանքներից ընկերությունը խնդրում է վերացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ-ի կազմած թիվ 1009509 ակտը, հրավիրել համապատասխան մասնագետ /կամ փորձագետ/ հաշվարկներ կատարելու, այդ հաշվարկները այլ ՃՇՇ-ների հետ համեմատելու և արդյունքում «Ստեփանավանի ճանապարհների շահագործում և շինարարություն» ՍՊԸ կողմից հարկային պարտավորությունների խախտում կատարելու հանգամանքը հաստատելու կամ հերքելու նպատակով:

### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Ստեփանավանի ճանապարհների շահագործում և շինարարություն» ՍՊԸ (այսուհետ նաև ընկերություն) գանգատը վերաբերվում է 2010 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածում իրականացված գործունեության ընթացքում փաստացի ծախսված դիզելային վառելիքի վերաբերյալ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի բացակայության համար ստուգման ակտով լրացուցիչ առաջադրված պարտավորությանը:

Դիզելային վառելիքի գծով կատարված ծախսերը հարկային հաշվառման առումով հիմք ընդունելու համար անհրաժեշտ է, որպեսզի նշված ծախսերը լինեն փաստաթղթերով հիմնավորված: Մասնավորապես, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը հաստակ սահմանում է, որ. «Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով»:

Իր հերթին, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն. «Սույն օրենքի համաձայն ԱԱՀ վճարող անձինք հաշվետու ժամանակաշրջանում պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում իրականացված հարկվող գործարքների (գործառնությունների) հարկվող

շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարը, որից հաշվանցվում (պակասեցվում) են՝

1) արտադրական և այլ առևտրային նպատակներով հանրապետության տարածքում հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված այն ապրանքների և ստացված այն ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների չափով (բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի), որոնց դիմաց բանկի կամ փոստի միջոցով մատակարարի բանկային հաշվին կատարվել է վճարում, բացառությամբ սույն հոդվածով սահմանված դեպքերի»:

Քննարկվող դեպքում դիզելային վառելիքի գծով կատարված ծախսերը փաստաթղթերով հիմնավորված չեն (ինչն ընդունում է նաև ընկերության տնօրենը), հետևապես այդ ծախսերի գծով շահութահարկի և ավելացված արժեքի հարկի գծով կատարված նվազեցումները (հաշվանցումները) ստուգումն իրականացրած անձանց կողմից չեն ընդունվել:

Քննարկման ընթացքում ընկերության տնօրենը նշել է, որ հավանաբար վերոգրյալ ծախսերը հիմնավորող փաստաթղթերը կորել են վարչական շենքում վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքում:

Ընկերության կողմից ծախսերը հիմնավորող փաստաթղթերը վերականգնելու և դրանց կրկնօրինակները Հանձնաժողովին ներկայացնելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 16.04.2014 թ-ի թիվ 15 որոշմամբ ստուգման ակտի դեմ բերված գանգատի քննարկման և դրա վերաբերյալ որոշում ընդունելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետը երկարաձգտվել է 15 օրով: Սակայն որևէ ապացույց, որը կհիմնավորեր դիզելային վառելիքի գծով կատարված ծախսերը փաստաթղթերով հիմնավորված լինելու հանգամանքը, Հանձնաժողովին չի ներկայացվել:

Սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը և դրան առնչվող նյութերը (գանգատի փաթեթը) ներկայացվել են քննարկման Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N1361-Ն որոշմամբ հաստատված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո ր ո շ ու մ է՝**

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**